

ի Աւլախաց յերկիր մըտին.
 դէմ յանդիման Քանցէլարին:
 Քանցէլարն էր բարի էշխան.
 175 Թուղթ ուղարկեց ի թաթրին խան
 Չենք, ասաց, մեք ձեզ հետ չարկամ,
 վաղուց հետէ եմք բարեկամ:
 Թաթարն ասաց Քանցէլարին,
 թէ Լինիցի հրաման քոյին,
 զինչ բան որ քեզ հաճոյսացին
 180 ամենեւին կատարեսցին:
 Չերեմիան հաստատեցին
 իշխան եղեալ վերայ երկրին.
 նստեալ քաղաքն ի Սէչովին.
 Աթու է հին ժամանակին:
 185 Այն շատ հեծեալն թաթար խանին
 ամէն դարձան իւրեանց երկրին.
 ապա եւ Քանցէլարն ինքնին,
 իւր հեծեալն ելան զնացին:
 190 Երկու ամիս վերայ անցին
 չար Ըրըզվանն ելաւ կրկին.
 Թուղթ ուղարկեց Երեմիին,
 ասաց՝ Կու գամ ի վրայ քոյին:
 Մեծ վոյվոտան օլախ ազգին,
 195 Երեւ զպարոն Կոմէնիցին,
 հեծեալ բազում ժողովեցին,
 ի պատերազմ պատրաստեցին:
 Պեղծն Ըրըզվան եւ զօրք նորին
 եկեալ ի դաշտ Սէչով քաղքին,
 Սոքա ելեալ ի դէմ զնացին,
 200 ի պատերազմըն դիմեցին:
 Դեկտեմբեր ամսոյ երկրորդին
 երեքշաբթի վաղվենէքին,
 մինչ երեք ժամ կոխ արին,
 չորրորդ ժամուն կոտորեցին:
 205 Չօրք եւ հեծեալ Ըրըզվանին
 փախուստ առին ամենեւին.
 սոքա զհետ հալածէին,
 որ եւ հասեալ սպանանէին:
 Եւ զԸրըզվանըն բրոնեցին,
 210 Բերին առջեւ Երեմիին,
 հրաման տուեալ ցիցըն զարկին,
 զնաց ի փառս սատանային:
 Հրրամանաւորն գոռելին
 Միջնորդութեամբ թաթար խանին
 215 Ըստամբաւէն սանչախ բերին
 Երեմիա վոյվոտ արին:

174. Չ. թուղթ: — 175. Չ. չուցի հետ: —
 191. Չ. թուղթ: — 202. Չ. ի փառ:

Խաղաղութիւն եղեւ երկրին,
 բարեխօսութեամբ սուրբ կուսին.
 անխող կենաց ամենեւին
 մինչեւ կրկին զալ միածնին:
 220 Այս ամենայն բանքս որ եղան,
 ի մեր մեղացըն դործեցան.
 աղօթեցէք դուք անխափան,
 որ ամէն չար բարի դառնան:
 225 Տէր Յովաննէսըն Կաֆացի,
 եպիսկոպոս սուրբ եւ արհի,
 անփորձ կենաց ինքն յաշխարհի,
 հրրաման ետ որ դրանքս ասի:
 Եպիսկոպոսըն սուրբ հոգի,
 ես անարժան հող եւ փոշի,
 230 զիս ձեռնադրեաց ի յայսմ երկրի,
 չորս աստիճան կարգ զբարիքի:
 Ես անպիտան մեղօք իլի,
 որ եմ զարկալ ի յայսմ երկրի,
 235 Յակոբ անուն պարսաւելի,
 ի քաղաքէն եմ թոխաթի:

Հրտ. Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ



ԱՂԵՔԱՆԳԻ ՄԱՆԹԱՅԻՆՑ

ՄԵՃԱ ՎԱՃԱՌԱԿԱՆՆ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԺ

Յիշողութիւններ՝ իր մահուան 20 ամեակի
 առթիւ:

(Վերջ:)

Ժ.

Աղ. Մանթաշեանց իր հօր միակ արու
 զաւակն էր. մի քոյր միայն ունէր, որ ա-
 մուսնացել էր Թիֆլիսցի Թոմաս Միրիմա-
 նեանցի հետ, եւ երկու որդի ունեցել, Աղե-
 քասնդր եւ Յովհաննէս¹:

219. Չ. կենս: — 227. Չ. աշխարհի: —
 233. Չ. իլի:

¹ Մեծը Աղեքսանդրը՝ «Թիֆլիսի Առևտրական
 բանկը» զանձապահ էր եւ ապա վարելը գործաւ:
 Իսկ կրտսերը՝ Յովհաննէս՝ (առևտրական ձեռնով —
 Իվան Ֆոմիչ Միրիմանով) իրաւարան էր եւ իմ մօ-
 տիկ ընկերս: Թուսական բուլճարական մեծ Յեղա-
 փոխութեան ժամանակ նա զրկուեց իր ամբողջ ու-
 նեցածից եւ յետին չբաւորութեան մէջ մնաց: Մենք
 միեւնոյն պայմաններ մէջ էինք ապրում Պետերբուր-
 գում: Իվան Ֆոմիչ՝ տկարակազմ լինելով չզիմացաւ
 սովին եւ այլ զրկանքներին եւ սնունդի նուազութիւնից

Մանթաշեանց ամուսնացել էր Թիֆլիսցի
 մի հայ օրիորդի՝ Դարեա Թամամշեանի հետ
 եւ ունեցել 8 զաւակ, 4 մանչ եւ 4 աղջիկ:
 Մանչերն են՝ իրենց աւագութեան կարգով —
 Յովհաննէս, Լեւոն, Յովսէփ եւ Գէորգ. իսկ
 աղջիկները՝ Աննա, Նադէժդա (Յուսիկ),
 Վառվառա եւ Թամարա: Աղջիկները բոլորն
 էլ ամուսնացած են Մանթաշեանցի կենդա-
 նութեան ժամանակ²:

Այս ութն էլ ողջ են այսօր:

Աղ. Մանթաշեանց զուարթ բնավորու-

աւմասպառ, փողոցում ինկաւ եւ հիւանդանոց տա-
 բուելով 3 օր վերջը վախճանուեց, հետեւելով այս
 շաւղում իրեն նման բերաւորներին...: Վերին աս-
 տիճանի մարտի եւ բարեխիղճ անձնաւորութիւն էր:
 Նրա մահուանից 10 օր յառջ մենք զերեկվան էինք
 առաջնորդել մեր մի ուրիշ ընկերին, Թիֆլիսցի
 բժշկապետ Աղեքսանդր Օրդուխանեանցին, որ նոյն-
 պէս տիրող պայմաններ հետեւութեամբ հիւանդացել
 ու 2 օր յետոյ մեռել էր:

Իվան Ֆոմիչ՝ կարծես թէ նախազգայով իր մօ-
 տալուտ վախճանը, այնտեղ, հանդատարանում ինձ
 ասել էր. «զգում եմ, որ ես էլ շուտով հետեւելու եմ
 Օրդուխանովին. ինձ էլ նրա կողքին կը թաղէք...»:
 Այդպէս էլ եղաւ...: Տխուր եւ ցաւալի յուշեր:

² Մանթաշեանցի 4 փեսաներն էլ հասարակական
 զիբք ունեցող յայտնի անձեր են, որոնց լաւ եմ ճանա-
 չում, ուստի հարկ եմ համարում մի քանի խօսք ասել
 նրանց մասին էլ:

1. Մեծ աղջկան Աննայի ամուսինն է՝ Բարսեղ
 Ղարաբեկան (առևտրական ձեռով՝ Վասիլի Դաւիթիչ
 Կորգանով) ընկի Թիֆլիսցի: Չինուորական հարիւրա-
 պետի աստիճան ունէր երբ ամուսնացաւ: Բայց զե-
 նուորականութիւնից աւելի զեղարուեստի ոչ ունե-
 նալով թողեց զինուորականութիւնը, ընտիր երաժիշտ
 է. ունի ոտակերէն լեզուով շատ կարեւոր հեղինակու-
 թիւններ նշանաւոր երաժարական երաժիշտների մասին:
 Նուազած է Նիկոլա Բ. Կայսեր առջեւ, երբ սա թա-
 դաժառանգ ժամանակ Կովկաս էր եկել. իրբեւ յիշա-
 տակ ստացել էր Նիկոլայի լուսանկարն իր սեպհական
 մակազրութեամբ: 1900ին հիմնեց Թիֆլիսում եւ մի
 քանի տարի հրատարակեց Կавказский Вѣстник (Կով-
 կասեան Համբաւարեր) անունով ոտակերէն ամսա-
 պիբը՝ գրական եւ զեղարուեստական բովանդակու-
 թեամբ: Պ. Ղարաբեկան, Թիֆլիսի իր տան մէջ,
 զիստաբարբար զեղարուեստի ճիւղերի վերաբերեալ
 հազարաւոր հատորներից բաղկացած ճոխ մատենա-
 դարան ունէր: Երբ Հայաստանի ներքին գործի
 դեպարտ. իր մատենադարանը ամբողջապէս նուիրեց
 Խորհրդ. Հայաստանին եւ ինք էլ տեղափոխուեց
 Երևան:

2. Երկրորդ փեսան է՝ Յովսէփ Տիգրանեան,
 ալեքսանդրոպոլցի, նոյնպէս զինուորական հարիւրա-
 պետ էր, երբ ամուսնացաւ: 1909ին, քաղաքագլուխ
 էր իր ծննդավայր Ալեքսանդրոպոլ քաղաքի (այժմ
 Լէնինական): Վերջին 1914—1918 պատերազմի ժամա-
 նակ առևտրական բանակի զինպետ էր եւ կրգրումի
 գրաման մասնակցած է թնդանօթաձիգ զօրքի հրա-
 մանատարի աստիճանով: Յետոյ տեղափոխուած է
 Երևան:

3. Երրորդն է՝ Լեւոն Եւանգուլեանց, հմուտ
 իրաւարան: Թիֆլիսի արքունի գատարանի գատարապ
 էր (procureur) եւ յետոյ նշանակուեց Փոխարքայ
 կոմս Վարդանուի-Դաշկովի մօտ «առանձին յանձնա-
 րարութիւնների պաշտօնակց», իրբեւ գատարան քննիչ:
 Այժմ վախճանած է:

4. Կրտսեր աղջկան ամուսինն է բժշկապետ
 Գեորգ Ամբարղանեանց. հմուտ բժիշկ էր եւ այդ սա-
 պարէկցում էլ մնում է: Այժմ Պարխս է բնակուում:

Թիւն ունէր եւ իրնէ լաւատես էր, ինչպէս լի-
 նում են առհասարակ բոլոր արիւնային կաղ-
 մուածքով (sanguin) մարդիկ: Նա զուարճա-
 սէր էր, ընկերասէր էր եւ ինչպէս Թիֆլիսցիք
 ասում են, սիրում էր «քէփ (քէյֆ) անել»:
 Բախար զրեթէ անընդհատ ժպտել է նրան,
 ինչպէս գործի, նոյնպէս եւ ընտանեկան
 կեանքի մէջ: Նա վիշտ չէր տեսել: Իր ամե-
 նամեծ ցաւը հօրը մահն էր եղած, որին սի-
 բում էր իր ամբողջ ողով: Առաջին կսկիծն,
 որ այնուհետեւ զբացած է, իր կնոջ մահուան
 առթիւ է եղած:

Տիկին Մանթաշեանց վերջին տարիները
 տառապում էր շաքարախտով: Իրբեւ հա-
 բուստ եւ իր առողջութեանը լաւ խնամք տա-
 նող կին, նա ոչ մի միջոց չէր խնայում իր
 խախտուած առողջութիւնը վերականգնելու:
 Երբ Թիֆլիսում հնարաւոր չեղաւ այդ անել,
 նա իր ընտանեկան հայ բժշկին հետն առած
 տեղափոխուեց Ֆրանկֆուրտ Մ. ի վրայ, ուր
 մի մասնագէտ բժիշկ խնամում էր նրան:
 Ամէն բժշկական միջոց անօդուտ հանդիսա-
 ցաւ եւ նա այնտեղ էլ վախճանուեց 1910ին:
 Մարմինը բերին Թիֆլիս: Տիկին Ման-
 թաշեանցի յուղարկաւորութեան հանդէսը
 փայլուն ապացոյց եղաւ այն մեծ եւ անկեղծ
 ժողովրդականութեան, որ Մանթաշեանց
 վայելում էր իր հայրենիքում: Ամբողջ քա-
 ղաքը զդրդուած էր: Տիկին Մանթաշեանցի
 յուղարկաւորութեանը բոլոր ազգային, քա-
 ղաքային եւ հասարակական հիմնարկութիւն-
 ները մասնակցում էին պատգամաւորութիւն-
 ներով եւ ծաղկեպսակներով:

Մանթաշեանց սաստիկ զղածուած էր իր
 նկատմամբ ցոյց տրուած այս ընդհանուր ժո-
 դովրդական յարգանքից եւ համակրանքից:
 Բայց իր կնոջ մահից յետոյ նա ընկճուած էր
 եւ մելամաղձոտ դարձաւ: Այս ընկճումն ու-
 նէր իր հոգեբանական պատճառը: Մանթա-
 շեանցի հայրը վախճանուել էր իր կնոջ, այս-
 ինքն Մանթաշեանցի մօր մահուանից մի
 տարի վերջը: Այս հիման վրայ Մանթաշեանց
 այն նախազգացումն ունէր թէ ինքն էլ նոյն-
 պէս իր կնոջից մի տարի յետոյ մեռնելու
 է...: Նրա յաղթանդամ կազմուածքը սկսել
 էր արագօրէն տկարանալ: Մանթաշեանց էլ
 վաղուց տառապում էր երիկամունքի քարի
 հիւանդութիւնից: Պարիսում նա մի անգամ
 բժշկական լուրջ գործողութեան ենթար-
 կուեց, որ յաջող վախճան ունեցաւ. այնու-

հետև ամէն տարի կանոնաւորապէս Պարիսից Contrexeville էր գնում բժշկուելու: Նա այս պատճառով էլ որոշ բժշկի էր հետեւում³:

1911 Մարտ ամիսն էր: Մի առաւօտ թիֆլիսի գրասենեակում նստած, զրազուած էինք կարեւոր գործով: Յանկարծ Մանթաշեանցի քթից սկսեց արիւն գալ: Պնակ բերին եւ նա թողեց, որ արիւնը հոսէ: Մի քառորդ ժամի չափ մնաց նա այդ վիճակում: Վերջապէս արիւնը կարուեց եւ նա թարագեանցի հետ դուրս ելաւ, տուն գնաց: Իմ սենեակից անցնելու ժամանակ ինձ ասաց. «չմոռնաս ճաշի գալու»: Գրասենեակում մեր զրազմունքն սկսում էր ժամի 9ին եւ տեսնում միայն մինչեւ 2, կէսօրից յետոյ: Ճիշդ ժամը 14ին գնացի նրա տունը: Մանթաշեանց նստած էր իր առանձնասենեակում մի փոքրիկ կոնք ձեռքի մէջ. արիւնը նորից սկսել էր գալ քթից: Ուղարկել էին, որ մասնագէտ բժիշկը գայ, որովհետեւ բոլոր սովորական միջոցները գործ էին դրել եւ արիւնը չէր կտրուում: Խարազեանց էլ քովը նստած, սիրտ էր տալիս նրան: Երբ ես եկայ, թարագեանց գնաց իսկոյն տունը, իր ընտանիքի հետ ճաշելու: Երբ արիւնահոսութիւնը մի քիչ պակասեց, «դուն գնա սեղանատուն, այնտեղ սպասում են, ես էլ քիչ վերջը կուգամ» ասաց նա ինձ: Սեղանի շուրջն ընդամենը 3 հոգի էինք: Մանթաշեանցի մեծ որդին՝ Յովհաննէս, դաւակնելի դատարակը՝ Գէորգ Ծահումեան եւ ես: Ետևով Մանթաշեանց ինքն էլ եկաւ եւ նստաւ քովս: Նա սաստիկ անթի էր, եւ ետանդով սկսեց

³ Սեղանի վրայ տիկին եւ պարոն Մանթաշեանց իրենց տարբեր բժշկին ունէին: Մի անգամ ինձ հրաւիրել էին ճաշի: Նստած էի նրանց երկուսի մէջ. անդը, բոս սովորականին: Տիկին Մանթաշեանց իր առջեւը դրել էր մի փոքրիկ կշիռը եւ ուտելուց յառաջ, ամէն ինչ, հաց, միս եւ այլն կշռում էր, բժշկի պատուէրի համաձայն: Նա զգուշանում էր մանուանգ աղանդերից (hors d'oeuvre), որը նա սաստիկ սիրում էր: Սեղանի վրայ առաջին կար կովկասի պատուական ձկնիկից: Տիկին Մանթաշեանց մեքենայօրէն խօսեցրէր զրեց իր պնակի վրայ, բայց բժշկի պատուէրը ինչեղով, զգուշացաւ ուտելուց եւ զրեց իմ առջեւ. «Գուր կերէք, ասաց նա տիրութեամբ. ինձ արդիւրեւ չէ: Մանթաշեանց էլ իրբերուն թիֆլիսցի, սիրում էր գինին, թէեւ միտ չափաւոր էր գործածում: Այն օրը սեղանի վրայ գրուած էր նրա սեղանային այգու գինին: Նա լցրեց իր բաժակը, մտեցրեց իրեն, որ գոնէ հոտը քաշէ եւ սպաւորի խորից ա՛խ քաշելով տուեց ինձ. «գուր խմիր Առաքեալ, ես չեմ կարող» ասելով: Իսկ ես, գետ երիտասարդ եւ կատարելապէս առողջ, հաճութեամբ կատարեցի նրանց երկուքի էլ կամքը: «Ես ձեր գոհն եմ», ասի կատակով:

ուտել: Բայց հազիւ թէ գլուխը ծռած ապուր էր ուտում, տաք գոլորշիքի աղբեցութեան տակ արիւնը վերսկսեց եւ դեղնագոյն ապուրը կարմիր գոյնի վերածուեց: Մանթաշեանցի գոյնը գնաց, սաստիկ տխրած՝ նա թողեց սեղանն եւ հեռացաւ: Երբ ճաշը վերջացաւ, գնացի իր սենեակը: Մանթաշեանց պառկել էր: Մասնագէտ բժիշկը բերանից ներս դրած գործիքի միջոցով արիւնահոսութիւնը յաջողել էր դադարեցնել, եւ պատուիրել էր, որ պառկի ու տեղից չչարժուի: Որդին եւ Ծահումեան՝ թողին, դուրս ելան: Մանթաշեանց ինձ պահեց իր քովը: «Տեսնո՞ւմ ես, ես բոլորովին միմիակ եմ. գնա նստիր դահլիճում եւ քառորդ ժամը մի անգամ մտիր քովս. ո՞վ գիտէ ի՞նչ կարող է ինձ պատահել...»: Այդպէս էլ արի:

Մնացի այնտեղ մինչեւ երեկոյ: Մանթաշեանց՝ ուսուսաց հոգեւոր նկարիչ Այվազովսկու երեք խոշոր ծովանկարն ունէր, որոնք իր դահլիճի գլխաւոր դարդն էին կազմում: Նրանց մէկը, որ համարեա ամբողջ պատը ծածկում էր, ներկայացնում էր Լօրդ Բայրընի այցը Միսթարեան վանքին: Անգլիացի մեծ բանաստեղծը գոնգոլից դուրս ելլելով ոտքը դրել էր Ս. Ղազար կղզու վրայ: Նրան դիմաւորում էին արբասայցն եւ ուրիշ Միսթարեան վարդապետներ, իրենց հայկական վանական տարագովը: Դահլիճի առանձնութեան մէջ, սկսայ երկարօրէն դիտել այդ պատկերը: Ետև շուտ էլ մտնում էի հիւանդի սենեակը, բայց մի քանի րոպէով միայն, որովհետեւ չէր սիրում, որ հիւանդ ժամանակ քովը երկար նստին: Միայն երբեմն խօսում էր, այն էլ իր հօրը եւ սրա հիւանդութեան պարագաները յիշելու համար...: Երեկոյեան Գէորգ Ծահումեան, դատարակը, դարձաւ տուն եւ ես իրաւունք ստացայ հեռանալու: Նրա աղջիկները՝ երբ հետեւեալ օրն իմացան իրենց հօր հիւանդութիւնը, իսկոյն եկան եւ կարգաւ հերթապահութիւն էին անում հիւանդի սենեակում:

Մանթաշեանցի այդ հիւանդութիւնը տեւեց 2 շաբաթ: Ապրիլի առաջին օրերն էին երբ նա կատարելապէս առողջացած դուրս ելաւ եւ եկաւ գրասենեակ: Նա այլ եւս յառաջուան գուարթ մարդը չէր. նիհարել էր եւ բարոյապէս էլ ընկճուել: Նա որոշեց իսկոյն մեկնել Պետերբուրգ, ուր ստիպողական բանկային գործեր ունէր կարգադրելու

եւ այնտեղից մեկնել Պարիս, այնտեղ հիմնովին դարմանուելու համար: Եւ որովհետեւ վախենում էր թէ քթի արիւնահոսութիւնը երկար ճանապարհորդութեան ժամանակ կարող էր վերսկսել, ուստի բացի իր սովորական հայ ծառայից⁴, իր անձնական բժշկին եւս հետը տարաւ մինչեւ Պետերբուրգ:

Արդէն հիւանդութիւնից տկարացած, 5 օրեայ երկաթուղային ճանապարհից նա սաստիկ յոգնել էր եւ Պետերբուրգ հասնելու երկրորդ օրը անկողին էր ընկել, այս անգամ ծանրապէս հիւանդ: Կանչել էին մայրաքաղաքի ամենամեծ բժիշկներին: Իր երկու կրտսեր որդիքն, որոնք ուսանում էին Պետերբուրգում եւ իր քրոջ որդին Յովհաննէս Միրիմանեան, իր քովէ էին: Իսկ երկրորդ որդին, Լեւոնը, որ իր գործերով Բաքու էր գտնուում, եկել էր թիֆլիս: Պետերբուրգից ամէն օր հեռագրեր էինք ստանում հիւանդութեան ընթացքի մասին: Մի շաբաթ յետոյ հեռագրի եկաւ թէ հիւանդը տանջում էր միզարգելութիւնից եւ թէ արիւն արդէն թունաւորուել էր: Սկսել էր տագնապը: Երկու օր վերջը երբ Լեւոն՝ այն օրուան հեռագրերը բացաւ, գլուխը տխրագին խոնարհեցրեց հոգեւոր վրայ: Աղբաւորը Մանթաշեանց կուրծքի վրայ: Աղբաւորը Մանթաշեանց, հայոց մեծագոյն վաճառականն եւ անդուգական բարեգործը զաղարկ էր ալրելուց: 1911 Ապրիլ 19 էր: Յաւալի լուրն իսկոյն տարածուեց ամբողջ քաղաքում: Այդ օրը թիֆլիսն ուրիշ խօսակցութեան նիւթ չունէր. ամէնքը մեծ եւ փոքր, հայ եւ օտար նրան էին յիշում, նրա կեանքն ու արարմունքը գովում եւ նրան ողբում:

Հանգուցեալի մարմինը Պետերբուրգից բերին թիֆլիս: Նրան ուղեկցում էին իր երրորդ որդին Յովսէփն եւ հետը տարած անձնական բժիշկը: Բոլոր ազգային եւ եկեղեցական հաստատութիւնները հանդիսաւոր հոգեհանգիստներ սարքեցին, որոնց մէջ առանձնապէս յիշատակելի է Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան մեծ դահլիճի մէջ կատարուածը, որին ներկայ էին Ընկերութեան Սորհուրդն իր ամբողջ կազմով եւ խուռն բազմութիւն: Հանգուցեալի տան մեծ դահլիճը ուր դրուած էր նրա զազաղը, ուխտատեղի էր դարձել: Այն հարիւրաւոր,

⁴ Մանթաշեանցի մշտական ծառան, որ ամէն տեղ ուղեկցում էր նրան եւ շատ անձնուէր կերպով ծառայում, Մշեցի մի երիտասարդ էր, Դաւիթ անունով:

եւ հազարաւոր անձինք, որոնք վայելել էին նրա բարերարութիւնը, շտապում էին վերջին անգամ յայտնել նրա անչնչացած մարմինն՝ իրենց երախտագիտական զգածմունքը. ամէն կողմից ցաւակցական հեռագրերներ էին տեղում: Յարգանքի մեծ ցոյց տեղի ունեցաւ իջմիածնի կողմից: Երկու հոգեհանգիստ տեղի ունեցաւ այնտեղ, Ապրիլ 24ին, մարմնի թիֆլիս հասնելու օրն եւ Ապրիլ 30ին թաղման օրը: Իզմիլբեան կաթողիկոս վախճանած էր արդէն եւ Տեղապահ Գէորգ արքեպ. Սուրենեանցի կարգադրութեամբ Սինդի անգամ Յուսիկ արքեպ. թիֆլիս եկաւ, յուղարկաւորութեան նախագահելու:

1911 Ապրիլ 30ին, թիֆլիսի գրեթէ ամբողջ հայ հոգեւորականութեան մասնակցութեամբ եւ անհամար բազմութեան ուղեկցութեամբ, հանգուցեալի մարմինը իր տնից յուղարկաւորուեց Մայր Եկեղեցի, ուր Յուսիկ արքեպ. պատարագ մատուցեց հանգուցեալի յիշատակին եւ դամբանական խօսեցաւ: Պատարագից յետոյ, եկեղեցու բակում, դադաղի վրայ ուղերձներ կարդացին եւ դամբանականներ խօսեցան բազմաթիւ պատգամաւորներ հայ եւ օտար հանրային հաստատութիւնների կողմից: Մեծ թուով՝ արծաթէ, մետաղեայ եւ կենդանի ծաղիկներից պսակներ, սրտաշարժ վերտառութիւններով, զարդարում էին դազաղը:

Աղբաւորը Մանթաշեանց հանգում է թիֆլիսի հայոց վանքի եկեղեցու (Մայր եկեղեցին), գաւթի մի անկիւնում, այն շէրմի մէջ, որ հանգուցեալը իր կենդանութեան ժամանակ շինել էր տունը եւ ուր արդէն մի տարուց ի վեր հանգում էր իր կինը: Վանքի եկեղեցու այդ գաւթը հայկական Պանթէոնի բնաւորութիւնն է կրում: Այնտեղ թաղուած են հայ անունը զանազան ասպարէզներում քայլել Լորիս-Մելիքով Կովկասի ուսանական բանակի հրամանատարն եւ Ռուսաստանի երբեմնի համարեա թէ դիկտատորը, 1877—1878ի ուսա թրքական պատերազմի կովկասեան բանակի հայ զօրապետները՝ Արշակ Տէր-Լուկասեան, Յովհ. Լազարեան, Բէհարուգ Եւրկոմիտիկեան եւ Ալիսաղեան. հոգաբարձ հայ քաղաքացիներ՝ թիֆլիսի քաղաքապետ Պողոս Իզմիրեան, բարեգործ վաճառական Միքայիլ Մանասարեան⁵, ազգային

⁵ Միքայիլ Մանասարեան ուսուսաց վաճառական

կազմում մեծ փոփոխություններ տեղի ունեցան: Առաջին հետևությունն եղաւ Գ. Սարգսեանցի գործից քաշուլը: Սա շատ լուստեանում էր թէ այլ եւս պիտի չունենայ այն ազդեցութիւնն, որ գործ էր դնում հօրը ժամանակ, որովհետեւ նոր երկտասարդ նախագահը տարբեր հայեացքներ տէր էր: Լեւոն՝ գործի ձեռնարկելուն պէս իր անձնական ընկերներին յառաջ քաշեց: Ես մնացի անփոփոխ իմ պաշտօնում: Լեւոն եւս գնահատում էր իմ աշխատակցութիւնը: Եւ քանի որ չկային Աղեքսանդր Մանթաշեանց եւ Դաւիթ Սարգսեանց, որոնց պատճառով ընկերութեան կենդանութեան փոխադրուել էր Թիֆլիս, մենք նորից տեղափոխուեցինք Բաքու, 1911ի վերջերը:

Մեծ հիմնադրի բացակայութիւնն՝ սկիզբները զգալի չէր, որովհետեւ ամէն ինչ կանոնաւոր շաւղի վրայ էր դրուած: Այնու ամենայնիւ մեծ աշարժութիւն էր հարկաւոր, որ գործերի ընթացքի մէջ խանգարում չպատահի:

Հետեւեալ տարին ես արտասահման մեկնեցայ մեծ քննական պատյոտ կատարելու: Ամէնից յառաջ անհրաժեշտ էր Եգիպտոսի մասնաճիւղերի քննութիւնը, ուր ամերիկական եւ անգլիական հօր մրցակիցներ ունէինք: Երկու ամիս մնալով Եգիպտոսում, կարելի եղաւ համաձայնութիւն գոյացնել նրանց եւ Մանթաշեանց ընկերութեան մէջ եւ գնելի բարձրացում յառաջ բերել: Եգիպտոսից եկայ Կ. Պոլիս, տեղեկութիւն ստացայ թէ իմ ներկայութիւնս անհրաժեշտ էր Բերլինում: Գերմանական Naphoport (= Deutsch-russische Naphta-Import-Gesellschaft) ընկերութիւնն, որի մէջ մեծ շահեր ունէին ռուսական նախարարներեան աները, ծրագիր էր յղացել միութիւն կազմել բոլոր եւրոպական մեծ քարիւղի ընկերութիւնների մէջ, Europäische Petroleum-Union անունով եւ որովհետեւ Մանթաշեանց ընկերութեան մասնակցութիւնը մեծապէս կարեւոր էր համարուել, ուստի այս խնդիրը կարգադրուել համար Կ. Պոլիսից մեկնեցայ Բերլին: Աւելորդ եմ համարում թէ այս եւ թէ այլ գործերի մանրամասնութիւնների վրայ կանգ առնել: Ամառ էր. Լեւոն Մանթաշեանց, ընկերութեան նոր նախագահը Պարիս էր եկել եւ հեռագրով խնդրում էր, որ Պարիս գնամ խորհրդակցելու:

Պարիսում մեծ անակնկալի հանդիպեցայ: Լեւոն բանակցութեան մէջ էր իր եւ միւս ժառանգների կողմից, «Մանթաշեանց ընկերութեան» բաժինները ծախելու: Գնողները Պետերբուրգի ռուսական բանկերն էին, իրենց հովանաւորած անձերի եւ ընկերութիւնների անուան տակ: Ես արդէն դարձել էի Բաքու, երբ որոշուած պայմանաժամին բանկերի հետ այդ կապակցութիւնը իրականութիւն ստացաւ: Պայմաններից մէկն այն էր, որ վարչական կազմի մէջ մտնելու էին բանկերի ներկայացուցիչները, հետեւաբար բոլոր նախկին վարիչները հեռանալու էին: Այդպէս էլ եղաւ: Լեւոն Մանթաշեանց միայն ինձ համար էր միջնորդել, որ ես մնամ, պատճառարանելով թէ ես ընկերութեան ամենահին վարիչն եմ եւ գործերի ամբողջ ընթացքին լաւատեղեակ: Ըստ այնմ էլ 1913ին ինձ հրաւիրեցին Պետերբուրգ, ուր որոշուել էր տեղափոխել ընկերութեան կենդանութեան: Լեւոն Մանթաշեանց մնաց նոր վարչական խորհուրդի նախագահ, թէեւ յատկապէս այս գործով նա քիչ էր զբաղուած, որովհետեւ ուրիշ գործեր էր սարքել, որոնք աւելի հետաքրքրական եւ աւելի կարեւոր էին դարձել նրա համար:

Նոր վարչական խորհուրդը, կամ աւելի ճիշդը ռուսական բանկային գործիչները՝ ի նկատի ունենալով թէ նախկին արդիւնքների գնելի բարձրանալը եւ թէ Մանթաշեանց ընկերութեան գործերի յաջողութիւնը, որոշեցին 8 միլիոն ռուբլու նոր ակցիաներ հրատարակ հանել, որով ընկերութեան դրամազուտը 22 միլիոնից բարձրացաւ 30 միլիոն ռուբլու: 1913ից մինչեւ 1917 դարձեալ փոփոխություններ մտան վարչական կազմի մէջ: Ամենից կարեւորն այն եղաւ, որ Նորէլները մեծ ազդեցութիւն ձեռք բերին: Վերջի վերջոյ երեք հոգի էին Մանթաշեանց ընկերութեան գլխաւոր եւ պատասխանատու ղեկավարները, իմիւր Լ. Նորէլ, Հայկ Գեանջուցեան եւ Վլադիմիր Ն. Տրոցկի-Սէնիւտովիչ: Այս վերջինն էլ Թիֆլիսում էր ծնուած եւ մօր կողմից հայ արիւն էր կրում (մայրը ծն. իշխանուհի Արամէլիք էր): Սրանք ղեկավարում էին ոչ միայն Մանթաշեանց ընկերութիւնն, այլ նաեւ մի քանի ուրիշ քարիւղի ընկերութիւններ, որոնց բաժինների մեծամասնութիւնը գտնուում էր միեւնոյն խումբի՝ այն է Նորէլ-

ների եւ երկու մեծ ռուսական բանկերի ձեռքում: Ծնորհիւ այս գլխաւոր ղեկավարները կողմից ինձ ցոյց տրուած վստահութեան, ես ոչ միայն Պետերբուրգում էլ շարունակում էի կառավարել Մանթաշեանց ընկերութեան արտասահման գործերը, այլ երկու ուրիշ ընկերութեան մէջ էլ ինձ կարեւոր պաշտօն յանձնուեց: Ուստի ոչ միայն Մանթաշեանց անունը մնում էր անխախտ, այլ ամէն ինչ շարունակուում էր նախկին կարգով:

Եկաւ ահուկ տարին, 1914ի պատերազմը: Մանթաշեանց ընկերութեան ինչպէս եւ միւս քարիւղի ընկերութիւններին առաջին հարուածը տուեց Գարգանէլի նեղուցի փակումը թուրքերի կողմից, որով կարելի չէր ալ այլ եւս ապրանք ուղարկել արտասահման եւ այնտեղի ճիւղերը հեղհեղէն զաղրեցրին իրենց: Գործունէութիւնը բացի Եգիպտոսից, որ ռուսական քարիւղի փոխաբէն սկսեց ամերիկականով գործել եւ անընդհատ ու յաջող կերպով շարունակեց իր գործունէութիւնը:

Մեծ պատերազմը դեռ չէր վերջացել, երբ 1917ին ծագեց Ռուսական Յեղափոխությունը՝ Փետրուարինը (հ. տ.) եւ ապա բոլշևիկականը Հոկտեմբերին (հ. տ.): Լէնին իր ընկերների հետ 1917 Ձատկի երբորդ օրը մտաւ Պետերբուրգ եւ 7 ամիս յետոյ իշխանութիւնն իր ձեռք անցնելով մահացու հարուած տուեց մինչեւ այն ժամանակ Ռուսաստանում աւերող կարգերին¹: 1917 Հոկտեմբերի (հ. տ.) Յեղափոխությունից յետոյ Լէնին, Տրոցկի, Չինովև եւ Ստալին անցան իշխանութեան գլուխ:

¹ Իրերի զարմանալի զուգադիպութեամբ ես ուղեկցում էի Լեւոնին մինչեւ Պետերբուրգ...: 1917 Ձատկին ես գնացել էի Ֆինլանդիա, յատկապէս գաղտնի կամ տօները այնտեղ անցնելու եւ վերադառնում էի Ձատկի երբորդ օրը, երկուշաբթի գնացելով: Այս միեւնոյն գնացքի մէջ էր Լէնին, որ ամբողջ Գերմանական ներքեւ դրուած վազմուած, որպէս զի յարաբերութիւն չունենայ Գերմանիայում ոչ ոքի հետ եւ ապա իր ընկերների հետ էր ֆինլանդիայ, արդէն բոլորովին Ծոռեկայից մտել էր ֆինլանդիայ, որպէս զի յարաբերութիւն չունենայ ներկայ եւ ականատես եղայ բոլոր անպատասխան յարցերին եւ ընդունելութիւններին, որ սարքել էին ռուս ընկերակազմներին համայնակարները — սրանք դեռ միտային էին գործունէութիւնը, երկար ժամանակ, իմ Պետերբուրգի ծանօթներն ու բարեկամները չէին զուգադիպում կատակ ձեւով ինձ մեղադրելուց թէ ես ընդ առաջ եմ գնացել Լէնինին եւ նրան բերել Պետերբուրգ...:

Միմիայն ետեւից արձակուած բուլշևիկական դեկրետները (décret) հիման վրայ բոլոր մասնաւոր սեպհականատիրական ձեռնարկութիւնները, այն է բանկերը, գործարանները եւ արդիւնաբերական ու առեւտրական ընկերութիւններն ու անհատական գործերը ազգայնացման կամ համայնացման ենթարկուեցան, առանց որ եւ է վարձատրութեան նրանց տէրերին: Բոլոր ընկերութիւնների ակցիաները ջնջուեցան, իսկ նրանց վարչական կազմակերպութիւնները լուծուած հրատարակուեցան: Այս հիման վրայ բունադատեալ կերպով իր գոյութիւնը դադարեցրեց մաեւ «Ա. Ի. Մանթաշեանց մաքարիւնարքերական եւ առեւտրական ընկերութիւնը»:

Այս դէպքերով չբաւականանալով յեղափոխական իշխանութիւնը սկսեց միտածի ձեռքարկել եւ բանտարկել բոլոր յայտնի գերամտէրերին եւ առեւտրականներին, նկատելով նրանց իբրեւ կոդապտիչներ...: Սրանք էլ զգալով իրենց գլխին գալիքը, միտածի սկսան փախչել, իրենց գլուխն ազատելու համար, ո՞վ ո՞ւր եւ ինչպէ՞ս կարող էր: Այս կերպով յաջողել էին պրծնել նաեւ քարիւղի արդիւնաբերութեան գլխաւոր տէրերն ու ղեկավարները, Նորէլ եղբայրները, Լեւոն Մանթաշեանց, Ստ. Լիանոզով, Ղուկասեան եղբայրները, Հայկ Գեանջուցեան, կասեան եղբայրները, Հայկ Գեանջուցեան, Վլ. Տրոցկի Սէնիւտովիչ եւ ուրիշներ: Իսկ ես, շնորհիւ մի անակնկալ նպաստաւոր պահու, շնորհիւ մի անակնկալ կերպով հեռանալ զաղայի, կարող էի ազատ կերպով հեռանալ Պետերբուրգից, բայց չուզեցի օգտուել այս Պետերբուրգից, բայց չուզեցի գլխին, թէեւ առթից եւ մնացի իմ պաշտօնի գլխին, թէեւ այդ պաշտօնս պաշտօնական կերպով ջնջուած էր...: Յեղափոխական նոր կառավարությունը, բոլոր մասնաւոր սեպհականութիւնները «ազգայնացնելուց» յետոյ մի նոր պետական մաքարիւնարքերական միութիւն հիմնեց Պետերբուրգում, որ պիտի ստանձնէր բոլոր նախկին ընկերութիւնների գործերը, ի պէտս եւ յօդուտ ընդհանրութեան:

Այստեղ իսկապէս պէտք էր, որ վերջ գնէի Աղ. Մանթաշեանցի կենսագրութեան, քանի որ ինքը, մեծ հիմնադիրը վախճանուել էր, իսկ իր հաստատած խոշոր հայկական ձեռնարկութիւնը դադարել, ձուլուելով համայն ռուսական արդիւնաբերութեան բովի մէջ: Բայց իմ «Յիշուութիւններս» լրացնելու եւ կրակապնելու համար, աւելորդ չեմ

